Արձանագրություն 3

«Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ կարիքների համար « ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ -19/17» ծածկագրով գնանշման հարցման միջոցով Հաշվապահական և բժշկական բլանկների գնում կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 11.06.2019թ. ժամը 11:00-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ

Ս.Խաչատրյան – «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի բուժ.գծով փոխտնօրեն

Անդամներ

Հ.Գաբրիելյան - «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հաշվապահ, գանձապահ

Ա.Գ.Սիմոնյան - «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի դեղատան վարիչ

Ա.Մանուկյան - «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի գործավար

Ա.Հակոբյան - «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի վարորդ, մեխանիկ

Քարտուղար-գնումների համակարգող

Լ.Բազիկյան - «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հաշվապահ, գնումների համակարգող

ՀՀ Կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին

1. Ընդունել ի գիտություն, որ

1.1 ՀՀ Կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ 04.06.2019թ.-ին հարցում է ներկայացվել ՀՀ կառավարության պետական եկամուտների կոմիտե 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ <<Սամնան>> ՍՊԸ-ի և <<Քոփի Փրինթ>> ՍՊԸ-ի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 07.06.2019թ.-ին ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի վերոնշյալ մասնակիցների «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

1.2 «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ գրաված մասնակիցներ ճանաչված <<Սամնան>> ՍՊԸ-ի և <<Քոփի Փրինթ>> ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային փոստի միջոցով հրավերով սահմանված ժամկետում ներկայացվել են որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը.

-Հանձնաժողովի քարտուղարը ներկայացված փաստաթղթերը, ինչպես նաև գնահատման թերթիկների երկուական օրինակները տրամադրել է ընթացակարգի գնահատող հանձնաժողովին:

-Հանձնաժողովի անդամները գնահատման թերթիկների մեկական օրինակները ներկայացրել են հանձնաժողովի քարտուղարին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

2. Գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց հաստատել «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտերի գնահատման արդյունքները.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
«Սամնան» ՍՊԸ	բավարար
«Քոփի Փրինթ» ՍՊԸ	բավարար

-Մասնակիցների կողմից ներկայացված որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

3. Հաստատել «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ -19/17» գնման ընթացակարգի ընտրված մասնակիցների մասին

Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ կետը՝ «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ - 19/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված մասնակիցներ հայտարարել «Սամնան» ՍՊԸ-ին՝ **1-ին** չափաբաժնի մասով և «Քոփի Փրինթ» ՍՊԸ-ին՝ 2-**րդ** չափաբաժնի մասով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

4. Գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

4.1 "Գնումների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

4.2 Գնման ընթացակարգի արդյունքների հաստատման նիստից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում <<Վեդու բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի տնօրենին տրամադրել մրցույթի արդյունքների հաստատման նիստի արձանագրության պատճենը՝ օրենքով սահմանված կարգով անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու նպատակով: Ընտրված մասնակցի հետ պայմանագիրը պետք է կնքվի հրավերով սահմանված կարգով. Այն է՝ ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում պայմանագիրը ստորագրելու և պատվիրատուին պայմանագրի ապահովումը ներկայացնելու պայմանով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

5. <u>Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին</u>

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/17 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատավով գնման պայմանագրերի կնքման օրը, ժամը 16:00-ին, «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի շենքում, հասցե՝ ք.Վեդի, Գայի 2:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

Գնահատող
հանձնաժողովի նախագահ՝ _____ Ս. Խաչատրյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Հ.Գաբրիելյան

_____ Ա. Գ.Սիմոնյան

_____ Ա.Մանուկյան

_____ Ա.Հակոբյան

_____ Լ.Բազիկյան

Քարտուղար՝